Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

18/4114/ 2 փետրվարի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

12007

Ա

## Մեղրաբլիթները քշություն են անում

Բուլատ Օկուջավան մի երգ ունի այն մասին, թե ինչպես է թագավորը գնում պատերազմի՝ թշնամուց մի պարկ մեղրաբլիթ նվաճելու ակնկալիքով: Նա իր հետ է վերցնում 5 ուրախ եւ 5 տխուր զինվոր: Տխուրները զոհվում են, իսկ ուրախները վերադառնում են տուն՝ իրենց հետ բերելով մեղրաբլիթների տեսքով բաղձալի ավարը: Եվ պետք չէ առանձնապես հուզվել տխուր զինվորների ճակատագրի համար, հեգնում է բանաստեղծը, որովհետեւ մեղրաբլիթները, միեւնույն է, բոլորին չէին հերիքի:

Ընտրությունները էլ, հավանաբար, մեր քաղաքական գործիչների համար պատերազմի նման բան են: Իսկ մեղրաբլիթը տվյալ դեպքում պատգամավորական տեղն է: Դրանք ընդամենը մի պարկ են՝ 131 հատ: Դրանցից 41-ը հիմնականում արդեն բաշխված են՝ նրանք, ովքեր «լավ են նայել» իրենց տարածաշրջանի ժողովրդին վերջին 5 տարվա ընթացքում, նրանք էլ մեծամասնական պատգամավոր կդառնան: Իսկ լավ են նայել նրանք, ովքեր լավ փող ունեն, վերջիններիս շարքին էլ Հայաստանում պատկանում են նրանք, ովքեր գտնվում են իշխանության գրպանում: Հետեւաբար, այստեղ իշխանությունը ի սկզբանե շահել է խաղը: «Մեծամասնական-համամասնական» բանավեճի իմաստը հենց դա է. Հայ հեղափոխական դաշնակցություն անունը ավելի բարձր է հնչում, քան Արա Նռանյանինը, իսկ մեր ժամանակների խոշոր ինտելեկտուալ Տիգրան Արզաքանցյանի անունը Գավառում ավելի հնչեղ է, քան ՀՀԿ-ն: Այստեղից էլ 41 մեղրաբլիթների ճակատագրի կանխորոշված լինելը:

Մնաց 90 հատ: Հայաստանում կա 3-4 կուսակցություն, որոնցից յուրաքանչյուրն իրեն իրավացիորեն կամ հանիրավի հզոր է համարում եւ պնդում է, թե ունի հարյուր հազարավոր անդամներ: (Դա, ի դեպ, խիստ կասկածելի է, որովհետեւ այդ դեպքում Հայաստանում ամբողջ չափահաս բնակչությունը կլիներ կուսակցական): Այդպիսի կուսակցություններում կան առնվազն 90 հոգի, ովքեր պարզապես երազում են դառնալ պատգամավոր: Սակայն այդ 90 մանդատը մեկ կուսակցության չի հասնի՝ դրանք այս կամ այն ձեւով կբաշխվեն այդ 3-4-ի միջեւ: Այստեղից էլ առաջանում է «անցողիկ տեղ» հասկացողությունը: Հենց սա է մեղրաբլիթների խնդիրը, որոնք բոլորին հաստատ չեն հասնի:

Մենք՝ հայերս, շատ մեծ դժվարությամբ ենք ընդունում, որ կա որեւէ մեկը, որը մեզնից ավելի տաղանդավոր է, ավելի շատ ծառայություններ ունի ազգի առաջ եւ կարող է ավելի օգտակար լինել ընդհանուր գործին: Այդ տրամաբանությամբ մի քանի տասնյակ կուսակցականներ վստահ են, որ իրենց տեղը ցուցակում եթե ոչ առաջինն է (այն ի պաշտոնե պետք է զբաղեցնի կուսակցության ղեկավարը), ապա հաստատ երկրորդը: Ցանկացած այլ տեղ դիտվելու է որպես մահացու վիրավորանք: Այսքանից հետո պատկերացնո՞ւմ եք, թե որքան լարված մթնոլորտ է հիմա կուսակցություններում:

Չէ, որ կողմից էլ նայես, ընտրությունները մեր ժողովրդի մեջ դատարկ տեղը հակասություններ են առաջացնում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Ծառուկյանը ՀՀ նախագահին չի՞ ասել՝ «ոնց ասեք»



Երեկ aravot.am-ը ԲՀԿ խմբակցության անդամ Վարդան Բոստանջյանին խնդրեց, այսպես ասած՝ «առաջին ձեռքից» տեղեկություն տալ կոալիցիոն 3 ուժերի հանդիպման մասին: Մասնավորապես, մեզ հետաքրքրում էր, թե այդ հանդիպման վերջում ԲՀԿ նախագահն ու հանրապետության նախագահն ինչպե՞ս են բաժանվել, Գագիկ Ծառուկյանն իսկապե՞ս, ինչպես հրապարակվել էր մամուլում, Սերժ Սարգսյանին ասել է՝ «ոնց ասեք»:
Ըստ Վարդան Բոստանջյանի՝ «Առանց չափազանցության՝ նրանք լավ են բաժանվել: Այդ «ոնց ասեք»-ը թարախ բառ է, ով որ ասել է՝ իրենից բստրում է, հասկանո՞ւմ եք: Մենք իրավունք չունենք թարախներին տեղ տալու: Ես չեմ ասում քաղաքական ուժերի կտրվածքով: Ընդհանրապես միշտ լավը պետք է տեսնել, բարին տեսնել: Եթե հանկարծ ինչ-որ տեղ դա պակասել է, պիտի նպաստես, որ շատանա, որովհետեւ չարը չարություն է բերում»:
Պարոն Բոստանջյանի մեկնաբանությամբ՝ այդ հանդիպման մեջ բարին է թեւածել. «Իհարկե, եղել են խոսակցություններ՝ ամենատարբեր ձեւի, որ ինչի պիտի ասեն՝ հետապնդում են, բան անեն... Այդ խոսակցությունները եղել են շատ առողջ, շատ բարեկամական: Բնականաբար, մի քիչ կա, ինչ որ խոսում են: Ասում են՝ առանց կրակի ծուխ չի լինի: Սա զսպողական էլեմենտների օգտագործման հանդիպում է եղել, որի պարագայում բնական չի՞, որ կոալիցիոն ուժերը, ըստ էության, ինչքան էլ առանձին-առանձին շահեր հետապնդեն, բայց դե, իսկապես մի շահ կա, էլի, այդ շահը պետության շահն է»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Համամասնականի խնդիրը ՀՀ-ի օրակարգում չի տեսնում

Արդյոք հայաստանյան քաղաքական դաշտի թիվ մեկ խնդիրն այսօր 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգ ունենա՞լն է, որի շուրջ կոնսոլիդացվել է ոչ միայն ողջ ընդդիմադիր դաշտը՝ «Առավոտ»-ի հարցին Աշոտ Մանուչարյանը պատասխանեց, որ Հայաստանի օրակարգում այդպիսի խնդիր չի տեսնում. «Այն, ինչ որ կատարվում է հիմա քաղաքական դաշտի կողմից, միգուցե ինչ-ինչ հանգամանքներ՝ դրական կամ բացասական, կարող են ստեղծել միայն մեկ դեպքում՝ եթե քաղաքական դաշտում ամրանան փիլիսոփայական այն դրույթները, որոնք կապված են գիշատիչ վիճակից դուրս գալու հետ: Եթե այդ դրույթները երկրորդական են, ինչն այսօր է տեղի ունենում, ապա այդ համակարգը որեւէ հնարավորություն Հայաստանի համար չի պարունակում՝ անկախ նրա ձեւից»:

Կարդացեք էջD2:

### Համաձայնեցվել է լսումների անցկացման կարգը եւ օրը

Փետրվարի 15-ին խորհրդարանում տեղի կունենան լսումներ՝ ԱԺ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու հարցի շուրջ: Այդ մասին aravot.am-ին փոխանցեց «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանը: Ըստ նրա՝ այդպիսի որոշում ընդունելու մասին խորհրդարանի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի երեկ կայացած նիստում հայտարարել է հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանը: Հանձնաժողովում համաձայնեցվել է լսումների անցկացման կարգը. այն է՝ լինելու են երկու զեկուցողներ՝ ՀՅԴ եւ «Ժառանգություն» խմբակցությունների կողմից, որոնք 10-ական րոպեում կներկայացնեն իրենց դիրքորոշումն այս հարցում, մեկ զեկույց կինչի կառավարության կամ գլխադասային հանձնաժողովի կողմից, կլինեն նաեւ եզրափակիչ ելույթներ:

### ՀՀԿ համագումարը՝ մարտի 10-ին

Երեկ կայացել է ՀՀԿ գործադիր մարմնի նիստը, որը վարել է նախագահ Սերժ Սարգսյանը: Մոտ երկու ժամ տեւած նիստում որոշում է ընդունվել մարտի 10-ին համագումար հրավիրել: ԱԺ փոխնախագահ, Հանրապետական կուսակցության մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը aravot.am-ի հետ զրույցում տեղեկացրեց նաեւ, որ համագումարում կուսակցությունը կընտրի նոր գործադիր մարմին: Թե ընտրություններից առաջ այս փոփոխություններն ինչով են պայմանավորված՝ մեր զրուցակիցը չցանկացավ մանրամասնել:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 11-ին, «Ուրբաթ» ակումբի հյուրն է ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը:

### Եղանակ

Երեւան -7 +5, Շիրակ -17 +1, Կոտայք -17 +1, Գեղարքունիք -17 +1, Լոռի -12 +2, Տավուշ -9 +4, Արագածոտն լեռներ -17 +1, Արագածոտն նախալեռն. -7 +5, Արարատ -8 +5, Արմավիր -8 +5, Վայոց Ձոր լեռներ -16 +2, Վայոց Ձոր նախալեռն. -9 +6, Սյունիքի հովիտներ -8 +7,

# Պայքար բուհական կոռուպցիայի՞, թե՞ ԲՀԿ-ի դեմ

## ԲՀԿ-ական Վարդեւան Գրիգորյանը ռեկտորի պաշտոնը գերադասում է ԱԺ պատգամավորի աթոռից

Մի քանի օր է՝ Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտը հայտնվել է հանրության ուշադրության կենտրոնում. դասի չհաճախող արմավիրցի ուսանողից 150 հազար դրամ կաշառք վերցնելու մեղադրանքով օրերս ձերբակալվեց մանկավարժության ֆակուլտետի երկարամյա դեկան Արտաշես Մկոյանը: Ճիշտ է, երեկ փոխվել է նրա նկատմամբ խափանման միջոցը, եւ դասախոսը հանրապետությունից չհեռանալու պայմանով ստորագրությամբ ազատ է արձակվել, սակայն Ոստիկանության կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչությունը հանգիստ չի թողնում նաեւ մյուս ֆակուլտետների դեկաններին ու ամբիոնի վարիչներին, հերթով կողպում է ֆակուլտետների դռները, կաթվածահար անում դասերը, ստուգումներ է անցկացնում կաբինետներում, մի խոսքով՝ ամեն կերպ փորձում է մեղավորներ փնտրել: Ընտրությունների նախաշեմին գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները այս ամենի տակ ենթատեքստ են տեսնում, մտածում են, որ սա ոչ թե կոռուպցիայի դեմ պայքար է, այլ համատարած ընկած են ԲՀԿ-ական ղեկավարների ետեւից:

Այս թեմայի շուրջ մենք պարզաբանումներ խնդրեցինք Գյումրիի մանկավարժականի ռեկտոր Վարդեւան Գրիգորյանից: Նրանից նախ՝ հետաքրքրվեցինք, թե պատրաստվո՞ւմ է արդյոք իր թեկնածությունը մեծամասնական կարգով առաջադրել թիվ 33 ընտրատարածքում, այլ կերպ ասած՝ հանրապետական Աշոտ Աղաբաբյանի ու ՕԵԿ-ական Հովհաննես Մարգարյանի դեմ: Ռեկտորը միանգամից բացառեց սա՝ տեղեկացնելով, որ երբեւիցե խնդիր չի դրել մասնակցել ընտրություններին: «Գուցե շփոթություն է ժողովրդի մեջ, որ ասում են՝ թիվ



33 ընտրատարածքի պատասխանատու Վարդեւան Գրիգորյան, մտածում են, որ եթե այդ պատասխանատվությունը ես վերցրել եմ, անպայման առաջադրվելու եմ: Նման որոշում ու նման մտադրություն չկա»,- ասաց բուհի ղեկավարը: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ ԱԺ ընտրություններին կմասնակցի միայն այն դեպքում, եթե կուսակցության քաղխորհուրդը նրա թեկնածությունն առաջադրի: Պարոն Գրիգորյանը նաեւ հիշեցրեց, որ ինքը ժամանակին եղել է թե՛ Գերագույն խորհրդի եւ թե՛ ԱԺ պատգամավոր: ԱԺ նախորդ ընտրություններում եւս ընտրվել էր՝ զբաղեցնելով ԲՀԿ համամասնական ցուցակի 7-րդ համարը, սակայն հարազատ բուհում ռեկտոր աշխատելը գերադասել է պատգամավոր լինելուց: Մենք նրանից նաեւ հետաքրքրվեցինք, թե բուհում ո՞ր կուսակցության ներկայացուցիչներն են գերիշխում՝ ԲՀԿ-ականնե՞րը: «Մի անգամ ասել եմ, նորից եմ կրկնում՝ եթե 6500 հոգանոց կոլեկտիվի մեջ ընդամենը 10-12 անդամ կա, եզրակացությունը թողնում եմ ձեզ: Ինչ քաղաքականացված լինելու մասին է խոսքը, բոլորը գիտեն, որ այս ինստիտուտում աշխատում են ե՛ւ հանրապետականներ, ե՛ւ դաշնակցականներ, ե՛ւ ՀԱԿ-ից անդամներ, այս կամ այն մարդը ինձ մոտ գնահատվել է իր աշխատանքով՝ ոչ անունով, ոչ ազգանունով, ոչ հայրանունով: Դուք, որպես լրագրող, շատ ինֆորմացված եք եւ, բնականաբար, ճշտել եք, որ չկա մեկը, որն ասի, թե Վարդեւան Գրիգորյանը երբեւէ կանչել է մեկին ու փորձել կուսակցական դարձնել»,- նեղսրտեց ռեկտորը: Նա նաեւ ասաց, որ ինքը երբեք չի խաղա մտավորականի արժանապատվության հետ: «Եթե շատ-շատերը չեն գիտակցում, թե ինչ է նշանակում պարտադրանքով կուսակցության անդամ դարձնելը, ես դա շատ լավ եմ գիտակցում, դա նշանակում է՝ հակառակ ռեակցիան է տալու: Եթե երիտասարդին ստիպես, նա կկորցնի իր արժանապատվությունը, չի կարողանա սկզբունքային քաղաքացի դառնալ, նա պետք է ազատ լինի իր մտածողությամբ, որպեսզի նրա մոտ սկզբունքայնություն ձեւավորվի, այլապես ստորացուցիչ, ստրուկի հոգեբանությամբ չենք կարողանա նորմալ քաղաքացիներ ունենալ»,- այսպես մեկնաբանեց ռեկտորը: Ըստ նրա՝ եթե փորձես մտավորականին ասել՝ սա սեւ է, ինքը անպայման դեպի սպիտակը կգնա, որովհետեւ հոյակապ գիտի, որ դա սպիտակ է:

Ռեկտորը մանկավարժական ֆակուլտետի 70-ամյա դեկանի կալանավորման մեջ քաղաքական ենթատեքստ չի ուզում տեսնել: «Եթե դա քաղաքականության հետ կապ ունենար, գուցե նրան կալանավորեին ինստիտուտում, ոչ թե փողոցում եւ ոչ՝ կիրակի օրը, աշխատանքային օր կլիներ, քննական շրջանի ընթացք կլիներ, բայց քննական շրջանի ընթացքն ավարտվել է, մեկ-երկու կուրս են մնացել: Դեպքը շատ ցավալի է եւ պատիվ չբերող մեր բուհին. 77 տարվա ընթացքում նման միջադեպ չի եղել մեր բուհում»: Մենք Վարդեւան Գրիգորյանից նաեւ հետաքրքրվեցինք, թե որքանո՞վ է հնարավոր, որ դասի չհաճախող ու դասախոսին կաշառք առաջարկող ուսանողը գնա ոստիկանություն ու գործ տա դասախոսի դեմ, եւ ինչո՞ւ ձերբակալված չէ կաշառք տվողը:

«Նախ ասեմ՝ ռեկտորի կաբինետը բաց է ինչպես աշխատողների, այնպես էլ ուսանողների համար, երեւի ուսանողների համար շատ ավելի բաց է: Չի եղել մի դեպք, որ տեսնեմ՝ ընդունարանում մի ուսանող է կանգնած, ու հանկարծ ես չընդունեմ, չլսեմ, մինչեւ վերջ հետամուտ չլինեմ հարցերի պարզաբանմանը, որովհետեւ ոչ բոլոր դեպքերում են ուսանողները մեղավոր: Ցանկացած հարց օբյեկտիվորեն լուծվել է, ուսանողը գիտի, որ իր ամենալավ հենարանը ռեկտորն է»,- ասում է Վ. Գրիգորյանը: Ըստ մեր զրուցակցի՝ նորմալ քննաշրջան կազմակերպելու համար քննաշրջանի ընթացքում փողոցից ոչ մեկին թույլ չեն տվել ելումուտ անել, ուսխորհրդին լիազորել են մտնել լսարաններ, լսել քննությունները, ֆիքսել բողոքները, իսկ քննություններին, որպես կանոն, ներկա է գտնվում ամբողջ կուրսը, մեկը լսում է մյուսի պատասխանը: «Ես մեր Քրեական օրենսգրքին չեմ տիրապետում, բայց գիտեմ, որ կաշառք տվողն էլ պիտի անպայման պատժվի, բայց, ամենայն ազնվությամբ, չէի հավատում Մկոյան Արտաշեսից, նա 45 տարուց ավելի աշխատում է այստեղ, մեր ինստիտուտի շրջանավարտ է, որբ մեծացած, շատ կիրթ մարդ է, ունի հրաշք ընտանիք»,- տեղեկացրեց ռեկտորը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

### Վթարվել է «Արզնի 2-Երեւան» ջրատարը



Երեկ, վաղ առավոտյան, Շենգավիթ վարչական շրջանի զգալի մասի եւ ամբողջ Արաբկիրի ջրամատակարարումը դադարեցվել է: Պատճառը, ըստ «Երեւան ջուր» ընկերության խմելու ջրի արտադրության եւ տեղափոխման վարչության պետ Կարեն Զաքարյանի, 900մմ տրամագծով «Արզնի 2- Երեւան» մայրուղային ջրատարի վթարն է: Այն վթարվել է Արզնի գյուղի հարակից տարածքում, որով վայրկյանում մոտ 800 լիտր ջուր է մատակարարվում Երեւանին:

Ընկերության մասնագետները վթարի վայրում իրականացնում են վերականգնողական աշխատանքներ, որոնք, չնայած բարդ տեղանքին եւ անբարենպաստ եղանակային պայմաններին, նախատեսվում է ավարտել արդեն երեկոյան, որից հետո ջրատարի շահագործումը կվերսկսվի: Սակայն եւս մոտ 7 ժամ կպահանջվի ջուրը սպառողին հասցնելու համար: Իսկ ջրամատակարարման գործող ժամանակացույցը նշված տարածքներում լիովին կվերականգնվի այսօր:

«Երեւան Ջուր»
հաղորդակցության բաժին

# Լոռեցիներն ամենաշատն են բաժանվում

Ազգային վիճակագիրների համար ամենամտահոգիչ թեման մնում է ինքնասպանությունների բարձր ցուցանիշը: Ճիշտ է, 2010 թվականի համեմատությամբ ինքնասպանությունների թիվը նախորդ տարի 30-ով նվազել է, այդուհանդերձ, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ Կարինե Կույումջյանը գտնում է, որ այդ թիվն էլ բարձր է:

Երեկ ասուլիսում տիկին Կույումջյանը ներկայացրեց ժողովրդագրական իրավիճակը 2011 թ.-ին: Կ. Կույումջյանի տվյալներով. «2011 թվականին 3.1%-ով նվազել է ծնունդների քանակը՝ կազմելով 43 447, իսկ մահացության ցուցանիշն աճել է 0.4%-ով՝ կազմելով 28 030»:

Անցյալ տարի 43 հազար 447 ծնված երեխաներից 23 հազար 160-ը տղաներ են, իսկ 20 հազար 287-ը՝ աղջիկներ:

Վիճակագիրները պարզել են, որ ամենաշատը նորածիններին անվանակոչել են Մանե, Մելինե, Մարի, Էլեն, Նարե անուններով, իսկ տղաներին՝ Նարեկ, Դավիթ, Գոռ, Հայկ, Էրիկ:

Մշտական բնակչության թվաքանակն աճել է 11 700-ով եւ կազմել 3.274.300 մարդ: Տիկին Կույումջյանի խոսքերով՝ այս տարվա հոկտեմբերին արդեն կիրառարկվեն մարդահամարի տվյալները:

Հարցին, թե ինչպե՞ս է գնահատում մարդահամարի արդյունքները, հատկապես հաշվի առնելով, որ բնակչությունն այնքան էլ բարեհամբույր չի գտնվել ու շատ հաճախ հաշվարարների առաջ դուռ չի բացել, Կարինե Կույումջյանն ասաց, որ իրենց գործառույթների մեջ չի մտնում գնահատականներ տալը, իրենց գործը աշխատանքները կազմակերպելն է:

Անցյալ տարվա ցուցանիշներով, ամուսնալուծությունների թվով առաջատար է Լոռու մարզը: Ամուսնական զույգերն ամենաքիչը բաժանվել են Տավուշի մարզում: Ընդհանուր առմամբ, 1000 բնակչի հաշվով ամուսնալուծվում է 1-ը:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

### Պաշտոնանկություններ Տավուշի ոստիկանությունում

Հունվարի 31-ին կայացել է ոստիկանության կոլեգիայի նիստ, որի ընթացքում հայտարարվել է կադրային փոփոխությունների մասին: ՀՀ ոստիկանապետի հունվարի 30-ի հրամանով աշխատանքից ազատվել են Իջեւանի եւ Բերդի ոստիկանապետեր Անդրանիկ Ազիբեկյանը եւ Սամվել Գալստյանը, Նոյեմբերյանի ոստիկանապետի տեղակալ Շահո Մելքոնյանը եւ Բերդի ոստիկանության քրեական բաժանմունքի պետը: Ոստիկանապետը նաեւ մի շարք բարձրաստիճան ոստիկանների նկատողություններ է հայտարարել:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

### Վթարների պատճառը ձյան շերտն է

Սյունիքի մարզկենտրոնում այս օրերին բավականին ավելացել են ավտովթարները: Այս անգամ մեքենաների բախման պատճառը սառած ճանապարհներն են եւ ձյան ծածկույթը: «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության Կապանի գրասենյակը միայն նախօրեին մեքենաների իրար բախման 12 դեպք է արձանագրել եւ իր ծառայությունները մատուցել:

Ապահովագրական ընկերության փորձագետ Ռոբերտ Հարությունյանի խոսքով՝ դեպքերի հիմնական պատճառը ձյան շերտն ու սառած եւ դժվարանցանելի ճանապարհներն էին: «12-ից մեկը խոշոր չափի վնաս էր կրել՝ 200 հազարից ավելի, իսկ մնացածի վնասները տարբեր չափերի էին՝ մինչեւ 200 հազար դրամի հասնող», ասել է փորձագետը:

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

### Մեքենան շրջվել էր անասնագոմի վրա

Տավուշի մարզի Կիրանց գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ավտոպատահար. մակնիշը չպարզված ԱՆ 2449 ԱՆ պետհամարանիշի ծանր բեռնատար ավտոմեքենան (վարորդ՝ Վալենտին Չոբգան) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ շրջվել Ալբերտ Սիմոնյանին պատկանող անասնագոմի վրա: Զոհեր եւ տուժածներ չկան:

# Ընթերական՝ ձեռնաշղթայով

## Ոստիկանները շիկացած երկաթով այրել էին ոտքը, խոշտանել

Հունվարի 20-ին Երեւանի Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում (դատավոր՝ Դավիթ Բալայան), ուր ընթանում էր Ֆելիքս Գեւորգյանի դեմ հարուցված քրեական գործով դատավարությունը, վկա Մանուկ Գյուլշադյանը հայտնեց, որ եղել է ընթերակա: Քննչական փորձարարության ժամանակ այս ընթերակային Ֆելիքս Գեւորգյանի հետ ձեռնաշղթայված տեղափոխել են դեպքի վայրից մյուս վայրը, եւ ականայից մասնակից դարձրել Ֆելիքսի կողմից իբր հանցանքի վայրերը մատնացույց անելու գործողություններին:

Անեն ինչ սկսվել է նրանից, որ ոստիկանության Մաշտոցի քննչական բաժնի ավագ քննիչ Վ. Ասատրյանի կողմից անցյալ տարվա նոյեմբերի 11-ի «Անձին որպես մեղադրյալ ներգրավվելու մասին» որոշման համաձայն՝ Ֆելիքս Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով եւ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Ըստ այդ մեղադրանքի, Ֆ. Գեւորգյանը 2011թ. մարտին, մայիսի կեսերին, մայիսի 30-ից մինչեւ հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում, ապա հունիսի վերջերին եւ հուլիսին «ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, ապօրինի մուտք գործելով մի շարք վայրերում տեղակայված տարբեր ընկերություններին պատկանող տարածքներ», գողացել է էլեկտրական շարժիչներ, գեներատորի էլեկտրական շարժիչի պղնձյա մալուխներ, 10 հատ 50-60 մետր երկարության հաստոցների համար նախատեսված պղնձյա մալուխներ: Ընկերություններին պատճառված նյութական վնասը 10. 000 ՀՀ դրամից 500.000 ՀՀ դրամ էր:

Ֆելիքս Գեւորգյանի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Ստեփան Ոսկանյանն (լուսանկարում) «Առավոտին» հայտնեց, որ իր պաշտպանյալը, ինչպես նախաքննության ժամանակ, այնպես էլ դատարանում, իրեն մեղավոր չի ճանաչել. «Չնայած նախաքննության սկզբում տված նախնական ցուցմունքներում «խոստովանել» է իր առնչությունը իրեն մեղսագրվող հանցագործությունների կատարման մեջ»:



Ըստ պաշտպանի, «խոստովանական» ցուցմունքները Ֆելիքս Գեւորգյանից կորզվել են ոստիկանության Մաշտոցի բաժնում՝ նրա նկատմամբ իրականացված անմարդկային բռնարարքների, ծեծի եւ խոշտանգումների արդյունքում:

«Մինչ այդ, 2011թ. սեպտեմբերի 28-ի վաղ առավոտյան Զովունի գյուղում գտնվող իր տնից Մաշտոցի քրեական հետախուզության պետը՝ Արթուր Գեւորգյանը, նրա տեղակալ Արկադիկ Սահակյանը եւ եւս 5-6 աշխատակիցներ Ֆելիքս Գեւորգյանին ապօրինի բերման են ենթարկել ոստիկանության Մաշտոցի բաժին, որտեղ էլ վերջինիս ենթարկել են դաժան ծեծի՝ շիկացած երկաթով այրելով ոտքը, մահակներով բազմաթիվ հարվածներ հասցնելով ոտնաթաթերին եւ ստիպելով, որ նա իր վրա վերցնի 2008թ. մարտի 1-ի սպանություններից որեւէ մեկը, որից հետո ցուցակով ներկայացրել են Երեւանի մի շարք վայրերից կատարված գողության դեպքեր եւ ստիպել, որ նա այդ հանցանքներում ընդունի իր մեղքը»,- ասում է պաշտպանը:

Բնականաբար, գտնվելով ծեծված եւ խոշտանգված վիճակում՝ Ֆելիքս Գեւորգյանը ստիպված ընդունել է իրեն ներկայացված մեղադրանքը, սակայն մի քանի օր հետո, արդեն Մաշտոցի քննչական բաժնում հրաժարվել է «խոստովանական» ցուցմունքներից եւ այդ կապակցությամբ ներկայացրել դիմում-բողոքներ:

Ստեփան Ոսկանյանի փոխանցմամբ՝ նախաքննությունն ընթացել է բազմաթիվ ապօրինություններով, քրեական դատավարության նորմերի էական խախտումներով:

Ի դեպ, վկա Մ. Գյուլշադյանը դատարանում ցուցմունք էր տվել, որ Ֆելիքսին Մաշտոցի բաժնում տեսել է «ոտքն ակնհայտ կաղալիս»: Խոշտանգումների մասին դատաբժիշկը 1 ամիս հետո հայտնել էր, թե չի կարող վաղեմությունը որոշել:

Երեւանի Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում հունվարի 20-ի դատական նիստին ցուցմունքներ տվեցին գործով «տուժող» ընկերություններից երկուսի ներկայացուցիչները: Նրանք իրենց ընկերություններից կատարված գողությունների մասին իմացել են օրեր անց, սակայն, չգիտես ինչու, չեն դիմել իրավապահ մարմիններին: «Գողությունների» վերաբերյալ այդ ընկերությունները հաղորդում են ներկայացրել միայն այն ժամանակ, երբ իբր այդ հանցագործությունները «բացահայտվելուց» օրեր անց իրենց կանչել են ոստիկանության Մաշտոցի բաժին:

Վկա Մանուկ Գյուլշադյանը դատարանում հայտնեց, որ չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, նույնիսկ տառերը չի ճանաչում, չգիտի Երեւանի որեւէ փողոցի կամ հուշարձանի անուն եւ չի կարող ասել, թե քննչական փորձարարության ժամանակ իրենք ուր են գնացել, Երեւանից դուրս եկե՞լ են, թե՝ ոչ, Մաշտոցի քննչական բաժնում ինքը որեւէ ցուցմունք չի գրել, միայն հիշում է, որ քննչական փորձարարության կատարումից հետո, վերադառնալով քննչական բաժին, ստորագրել է մի քանի արձանագրությունների տակ, որից հետո իրեն վերադարձրել են իր անձնագիրը եւ ազատ արձակել:

Պաշտպան Ս. Ոսկանյանը տեղեկացրեց, որ քրեական գործի նյութերում առկա՝ քննչական փորձարարությանը կից լուսանկարներում պատկերված է Ֆելիքս Գեւորգյանի հետ ձեռնաշղթայված ընթերակա Մանուկ Գյուլշադյանը:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. «Առավոտի» տեղեկություններով, դատական նիստի ավարտից հետո ընթերակա-վկային կանչել են ոստիկանության Մաշտոցի բաժին, նրան առաջարկել են դատարանում ասել, թե իբր ինքն իր կամքով է խնդրել քննիչին՝ քննչական փորձարարության ընթացքում ձեռնաշղթա անցկացնել:

## Բռնաբարության գործը՝ դոնփակ դահլիճում



Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ, նշանակվել էր Դավիթ Օսիպյանի նկատմամբ հարուցված քրեական գործով դատական նիստը: Դավիթ Օսիպյանը մեղադրվում է անչափահաս Մ. Բ.-ի բռնաբարության համար: Բռնաբարությունը տեղի է ունեցել անցյալ տարվա նոյեմբերի 23-ին՝ մայրաքաղաքի Կորյունի փողոցի վրա գործող «Դուետ» բարի առանձնասենյակներից մեկում: Անչափահաս աղջնակը ստացել էր նաեւ մարմնական վնասվածքներ:

Ուշադրության արժանի է այն, որ այս գործը դռնփակ ընթացակարգով է ընթանում, անչափահաս զոհի ինքնության պաշտպանության եւ անվտանգության նկատառումներից ելնելով, ինչպես լինում է նման գործերով: Սակայն «ԴատաԼեքսի» վազող տողում չէր հարգվել այս սկզբունքը, եւ զոհի անունը ներկայացվել էր այնպես, ինչպես պատկերված է լուսանկարում:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

## Թունավորվել էին

ԱԻՆ փրկարար ծառայության տեղեկացմամբ՝ հունվարի 31-ին դեղորայքային թունավորումով Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Սարկավագի փողոցի թիվ 145/1 շենքի 6-րդ բնակարանի բնակիչ, 23-ամյա Շուշանիկ Գագիկյանը:

Տուժածի առողջական վիճակը գնահատվել է ծանր: Իսկ փետրվարի 1-ին՝ ժամը 07.53-ին տեղեկատվություն է ստացվել, որ դեղորայքից թունավորվել է Երեւանի Քոչարի փողոցի թիվ 9 շենքի 15-րդ բնակարանի բնակիչ, 1983 թվականին ծնված Եվա Յափուջյանը, ով տեղում ստանալով առաջին բուժօգնություն՝ հրաժարվել է հետագա հոսպիտալացումից:

## Հոր ծառայողական մեքենայով բախվել է «Ֆոլցվագեն»-ին




Երեկ ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ինչպես «Առավոտին» հայտնել է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամը 21.00-ի սահմաններում, Տերյան փողոցում «Հյունդայի Սոնատա» մակնիշի 097 OO 11 համարանիշի ավտոմեքենան բախվել է «Ֆոլցվագեն Տուարեգ» մակնիշի 55 OP 551 համարանիշի ավտոմեքենային: Բարեբախտաբար, զոհեր եւ վիրավորներ չկան: Ֆոտոլրագրողը հայտնել է, որ «Հյունդայի Սոնատա» ավտոմեքենան պատկանում է Ազգային ժողովի պատգամավոր Հարություն Ղարագյոզյանին: Վթարի վայրում ոմանք ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին փորձում էին համոզել, որպեսզի վթարը չձեւակերպվի: Սակայն ՃՈ աշխատակիցները չընդառաջեցին: «Հյունդայի Սոնատա»-ն վարել է 26-ամյա Միքայել Ղարագյոզյանը, իսկ «Ֆոլցվագեն Տուարեգ»-ը՝ 20-ամյա Նարեկ Աղաջանյանը:

# 83-ամյա կնոջը բռնաբարած 26-ամյա երիտասարդին կազատազրկեն 5 ու կես տարով

Հունվարի 26-ին, Իջեւանում, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը (դատավոր՝ Ռաֆիկ Մելքոնյան) Լոռու մարզի Լեջան գյուղում ծնված, Կողբում ժամանակավորապես բնակվող, 26-ամյա, ամուրի Արեն Սարուխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածի 1-ին մասով, 138 հոդվածի 1-ին մասով եւ 147 հոդվածի 1-ին մասով դատապարտեց հինգուկես տարվա ազատազրկման: Արեն Սարուխանյանը 2011-ի հոկտեմբերի 16-ին, ժամը 23-ի սահմաններում, գտնվելով ոգելից խմիչքների ազդեցության տակ, լուսամուտը հրել-բացելու միջոցով մուտք է գործել Կողբի 83-ամյա բնակչուհի Արփենիկ Անանյանի սեփական տան երկրորդ հարկի հյուրասենյակ եւ շուրջ 3 ժամվա



ընթացքում միայնակ ապրող ծեր կնոջ բերանը փակելով, սպառնության սպառնալիքներ տալով, նրա դեմքին եւ մարմնի տարբեր հատվածներին բռունցքներով հարվածներ հասցնելով՝ բռնաբարել է Ա. Անանյանին: Որպես պատասխանատվությունը եւ պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը հաշվի է առել, որ Արեն Սարուխանյանը համանման հանցագործություն կատարելու համար 2009թ. նոյեմբերի 26-ին դատապարտվել է 3 տարի եւ 15 օրվա ազատազրկման: Նա 2011թ. մայիսի 31-ի համաներումով ազատվել է պատժի հետագա կրումից, սակայն դատվածությունը չի մարվել: Մինչ դատաքննությունը սկսվելը Արեն Սարուխանյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել եւ միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Զավթված պուրակ եւ անարժան թանգարան

Անցյալ տարվա նոյեմբերի 12-ին «Առավոտում» տպագրված «Աղբամանները «զարդարում» են Դեմիրճյանի թանգարանը» հոդվածում տեղեկացրել էինք, որ նշանավոր գրող, դրամատուրգ եւ հասարակական գործիչ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան առաջին անգամ այցելողները հաստատ սկզբում կմոլորվեն, ապա մի կերպ թանգարանի տեղը գտնելուց հետո խորը հիասթափություն կապրեն: Պատճառն էլ այն էր, որ Աբովյան 29 հասցեում գտնվող թանգարանի ուղիղ պատուհանի տակ մեկ տասնյակի չափ աղբով լեցուն աղբամաններ կային: Մեր հրապարակումից հետո դրանք հանվեցին գրողի թանգարանի մուտքի մոտից: Հիշեցնենք, որ թանգարանի տարածքը գրողի բնակարանն է եղել 1929-1956 թվականներին:







Աղբամանների հանելուց հետո, սակայն, խնդիրները չվերացան:

«Առավոտի» հետ զրույցում Դ. Դեմիրճյանի տուն-թանգարանի վարիչ Կարինե Ռաֆայելյանը SOS հնչեցրեց. «Թանգարանը 1977-ին հիմնադրվելով, առաջին եւ վերջին անգամ այդ թվին է անցել հիմնանորոգում, դրանից հետո եղել են մասնակի նորոգումներ: 2005 թվականից լսում եմ, որ մյուս տարի թանգարանը կմտնի պետական ծրագրի մեջ, եւս մեկ տարի հետո ասում են՝ մյուս տարի կլինի եւ այդպես շարունակ: Այժմ էլ հայտարարում են, թե՝ 2013-ին պետք է հիմնանորոգման ենթարկվի: Թանգարանի վիճակը խայտառակ է, անմխիթար, ուստի չի կարելի վերանորոգումը տարիներով ուշացնել: Բոլորը խոսում են արվեստի գովազդի ու մշակույթի մենեջմենթի մասին, մի բան, որոնցից դարերով հետ է մեր թանգարանը: Եթե այսօր հաջողացնում ենք տարվա մեջ մի 1000-1500 այցելու բերել թանգարան, դա միայն մեր անձնական կապերի, կաշվից դուրս գալու արդյունքում է»:

Իսկ ինչպե՞ս կարելի է այցելուներին գայթակղել, երբ թանգարանն անհրապույր է, պատերը խոնացած են, ծեփը թափված, ու այդ ամենը չեն կարող բացասականորեն չանդրադառնալ այցելուի տրամադրության վրա: Տիկին Ռաֆայելյանը նշեց, որ ամեն ինչ անում են Դեմիրճյանին պատավորիչ ներկայացնելու համար, փորձում են տալ այնպիսի ինֆորմացիա, որը դպրոցականը կամ ուսանողը չի կարող ստանալ դասագրքից, որեւէ աշխատությունից: «Չենք ցանկանում, որ երեխան թանգարանից հեռանա դժգույն պատերի տպավորությամբ ու մտածի, թե Դեմիրճյանը դրան էր արժանի: Ուրիշ թանգարաններում կարող են այցելուի առաջ դուռը բացել եւ մոռանալ նրա մասին, այցելուն շրջի իր ուժերով, իսկ չենք կարող մեզ նման բան թույլ տալ: Շատ դժվարանում է մեր աշխատանքը եւ այցելուին թանգարան բերելը, մեկ այլ պատճառով եւս. թանգարանի դիմացի ծառուղին զավթված է կրպակատերերի կողմից: Մենք ստիպված այցելուներին դիմավորում ենք Իսահակյանի արձանի մոտից, մինչդեռ ճիշտ կլիներ, որ Դեմիրճյանը վերջապես ունենար արձան իր թանգարանի դիմաց, պուրակն էլ ազատ լիներ, որպեսզի այցելուն տեսներ ու ներս մտներ, ոչ թե անգամ քարտեզը ձեռքին՝ մոլորվեր»,- նեղսրտում է Կարինե Ռաֆայելյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Երբ ցանկությունն ու հնարավորությունները համընկնում են

Գյուղատնտեսությունը ֆինանսական ներդրումների տեսակետից համարվում է բարձր ռիսկային ոլորտ: Այդուհանդերձ, գերակա ճյուղն առավել մրցունակ դարձնելու անհրաժեշտությունը նկատի ունենալով եւ արդյունավետ կառավարման շնորհիվ վերջին տարիներին այս բնագավառում արձանագրվել են դրական արդյունքներ: Մասնավորապես՝

* 2007-2011 թվականներին գյուղատնտեսական արտադրանքի ծավալն աճել է 1,4 անգամ, 633 միլիարդ դրամից հասնելով 862 միլիարդ դրամի,

* Մատչելի գյուղացիական վարկերի մեխանիզմի ներդրման շնորհիվ 25 հազարից ավելի գյուղացիներ եւ ֆերմերային տնտեսություններ ստացել են աննախադեպ ցածր՝ 8-10 տոկոս տոկոսադրույքով վարկեր,

* Էլիտար սերմերի տրամադրման արդյունքում միջին բերքատվությունը հեկտարից կազմել է 35-40 ցենտներ, իսկ առավելագույնը՝ 70 ցենտներ,

* Գյուղմթերքների իրացման եւ արտահանման շղթայի զարգացման արդյունքում արտահանման ծավալն աճել է 26 տոկոսով,

* Անասնաբուծության արդյունավետության բարձրացման նպատակով բուժանյութեր ձեռք բերելու համար պետության կողմից ներդրվել է շուրջ 33 միլիարդ դրամ,

Շուկայականից 50 տոկոս ցածր գնով սակավահող ֆերմերներին տրամադրվել է 163 միավոր գյուղտեխնիկա:

* Ավելացված արժեքի հարկից ազատվել է գյուղտեխնիկայի, սարքավորումների, սերմերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի ներմուծումը եւ ներքին շուկայում իրացումը եւ այլն:

## Մեկ միլիարդ դրամ՝ մատչելի գնով պարարտանյութի համար

Մեր երկրում գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների թիվը՝ բնակչության ավելի քան 45 տոկոս, ընդգծում է ոլորտի զարգացման սոցիալական մեծ կարեւորությունը: Իրենց հերթին մասնավորապես 2010թ. վերջին գրանցված աննախադեպ անկումը եւ իրականացված որոշակի միջոցառումների արդյունքում արձանագրված դրական փոփոխությունները եւս մեկ անգամ հաստատել են, որ գյուղատնտեսության կառավարումը լրջագույն բարեփոխումների կարիք ունի, եւ որ պետական համակողմանի աջակցությունը օրվա անհրաժեշտություն է:





Թերեւս այդ է պատճառը, որ գյուղատնտեսական վարկերի որոշակի չափով սուբսիդավորման, ագարակատերերին սերմեր ու տեխնիկա տրամադրելու եւ բերքի կորստի մասնակի փոխհատուցման ծավալուն աշխատանքների հետ միասին ՀՀ կառավարությունը անցյալ տարեվերջին՝ դեկտեմբերի 22-ի համապատասխան որոշմամբ նախաձեռնեց նաեւ մատչելի գներով ազոտական պարարտանյութի ներմուծման եւ շուկայականից ցածր գնով հողօգտագործողներին տրամադրելու գործընթացի նորովի վերակազմակերպումը՝ մեկ միլիարդ դրամի շրջանակում: Ըստ որում՝ նպատակը ոչ միայն հողօգտագործողներին որոշակի չափով օժանդակություն տրամադրելն է, այլեւ մշակովի ցանքատարածությունների ընդլայնումը եւ առավել բարձր արտադրողականության ապահովումը:

## Ինչպես է կազմակերպվում գործընթացը

Գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության եւ բույսերի պաշտպանության վարչության պետ Գեւորգ Հարությունյանի հավաստմամբ՝ Ծրագրի շրջանակում Հայաստան ներմուծվող 25 հազար տոննա պարարտանյութը համայնքների ղեկավարները, հաշվի առնելով պահանջարկը, կտրամադրեն բնակիչներին՝ ընդունված 8000 դրամ շուկայական գնից զգալիորեն էժան՝ 6000 դրամով /մնացած 2000 դրամի պետական սուբսիդավորմամբ/, եւ գումարները կփոխանցեն կառավարության որոշմամբ հաստատված մատակարար կազմակերպությանը: Կարեւոր է, որ պարարտանյութի համապատասխան խմբաքանակները համայնքներ հասցնելու, ճանապարհածախսի, ինչպես նաեւ բեռնաթափման, պահեստավորման, բաշխման, ընդունման-հանձնման փաստաթղթերի ստորագրման նպատակով բնակիչներից, նաեւ համայնքներից, չի գանձվելու լրացուցիչ գումարներ: Գործընթացն իրականացվելու է մատակարար կազմակերպության/«Կոտայքի բերրիություն» ԲԲԸ/ եւ համապատասխան մարզպետարանների հստակ պայմանավորվածությամբ, պարարտանյութը մինչեւ Հայաստան բերելը գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ ենթարկվելու է մասնագիտական փորձաքննության, ի մասնավորի՝ ապահովելու համար ազոտի նորմատիվ պարունակությունը՝ 34,4 տոկոս:

Պարարտանյութի առաջին խմբաքանակը առաջիկա օրերին կլինի հանրապետությունում, նախատեսված է այն տրամադրել Արմավիրի եւ Արարատի մարզերի հայտատու համայնքների հողօգտագործողներին: Ներկրումը նախատեսված է ավարտել մինչեւ ապրիլի 10-ը, այդ կապակցությամբ համապատասխան հաշվետվությունները կներկայացվեն մինչեւ նույն ամսվա 20-ը: Ավելին. ծրագրի իրականացման հետ կապված բոլոր աշխատանքների համակարգման նպատակով կառավարությունում կձեւավորվի աշխատանքային խումբ:

## Ծրագրի արդյունավետությունը

Կառավարության նախաձեռնությամբ եւ Ծրագրով նախատեսված 25 հազար տոննա ազոտական պարարտանյութը, լինելով ընդհանուր պահանջարկի զգալի մասը, այսպես ասենք, ամբողջությամբ «չի ծածկում» հանրապետության ողջ մշակովի հողատարածքները, եւ հողօգտագործողները, համայնքների ղեկավարներն ու մարզպետարանները անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկեն նոր առաջարկներ գտնելու-իրացնելու նպատակով, օգտվեն նաեւ շուկայի ծառայություններից: Սակայն չպետք է մոռանալ, որ ներկա պարագայում վաղօրոք հաշվի է առնվել առկա վճարունակ պահանջարկը, եւ ըստ այդմ էլ կատարվել են հաշվարկներ ու ներկայացվել պետական գերատեսչությունների մասնագետների քննարկմանը: Միաժամանակ այն, էական աջակցություն լինելով հողօգտագործող գյուղացուն, իրական հնարավորություն է ստեղծում միավոր հեկտարից ապահովելու առավել բարձր բերք, ինչու չէ, նաեւ որոշակի ազդեցություն ունենալ գյուղատնտեսական ապրանքների շուկայում:

Ասել է թե ոչ շատ մեծ ծրագիրն իրականում բավականին բովանդակալից է եւ նպատակային: Գործընթացների հետեւողական իրականացման պարագայում այն հավակնում է դառնալ շարունակական, գյուղոլորտին տրամադրվող գումարներն առավել հասցեական դարձնելու առումով, ինչը նույնպես, գաղտնիք չէ, ժամանակակից տնտեսության կազմակերպման տեսակետից կարեւոր է:

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ
Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն

VivaCell MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Բաքուն նոր խայծ է պատրաստում Լեւոն Արոնյանի համար




«Tata Steel Chess» շախմատային փառատոնի ավարտից հետո հայտնի է դարձել, որ Ադրբեջանը մտադիր է կրկին հավակնորդների մրցաշար անցկացնելու հայտ ներկայացնել:

Այս տեղեկությունը «Extra-time.az»-ին տված հարցազրույցում հաստատել է Ադրբեջանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Մահիր Մամեդովը: Հասկանալի է, որ շոշափվել է նաեւ ենթադրաբար կայանալիք այդ մրցաշարին Լեւոն Արոնյանի մասնակցության թեման: Մամեդովի խոսքերով՝ այո, Ադրբեջանը հավակնում է այդ մրցաշարի անցկացմանը: Սակայն հնարավորությունների մասին հիմա դեռ շարժի խոսել: Դա ՖԻԴԵ-ի մենաշնորհն է: Առայժմ հայտնի չէ, թե բացի իրենցից, էլ ո՞վ է հայտ ներկայացրել:

- Մեր հայտի հետ կապված ամենակարեւոր խնդիրը, թերեւս, Լեւոն Արոնյանի որոշումն է, ինչի պատճառով հավակնորդների նախորդ մրցաշարը Բաքվից տեղափոխվեց Կազան: Այս հարցով Արոնյանի հետ անմիջականորեն չե՞ք բանակցել:

- Ոչ: Իհարկե, ես նրա հետ չեմ զրուցել: Արոնյանը պրոֆեսիոնալ է եւ հիանալի հասկանում է, որ Բաքվում իր համար բոլոր պայմանները կապահովվեն: Ինձ թվում է, թե խնդիրն այստեղ ոչ այնքան Արոնյանն է, որքան Հայաստանի շախմատի ֆեդերացիայի ոչ ճիշտ արձագանքը: Եթե Արոնյանին մնար, ինձ թվում է, ոչ մի խնդիր էլ չէր լինի: Ադրբեջանն ընդունել եւ ընդունում է եվրոպական եւ համաշխարհային մակարդակի մարզական եւ այլ ոլորտների միջոցառումներ, որոնց մասնակցում են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները: Կազանից առաջ էլ մենք ընդգծել էինք, որ Արոնյանի հարցը քննարկված է առնվազն երկրի սպորտի ղեկավարների մակարդակով եւ նրան կտրամադրվեն ամենաբարձր երաշխիքներ: Լեւոնը կարող է Բաքվի առաջարկած պայմաններին նոր պահանջներ էլ ներկայացնել՝ իրեն ցանկալի ընդունելություն կազմակերպելու համար: Թեեւ, նրա՝ Բաքու չգալու համար իրական պատճառներ չեմ տեսնում:

- Նախորդ անգամ նրա հիմնական պատճառաբանությունն այն էր, որ ինքն իրեն այստեղ հարմարավետ չի զգա:

- Շախմատիստներն իրենց ուղեղի նուրբ եւ անսովոր կառուցվածք ունեցող մարդիկ են համարում: Դրա համար էլ իրենց ոչ հարմարավետ կարող են զգալ ամեն մի մանրուքից: Օրինակ, կողքի աթոռի ճռռոցից: Դրա համար էլ մեկ անգամ եւս ընդգծում եմ, որ Բաքվում Լեւոն Արոնյանի համար կապահովվենք բոլոր պայմանները, ինչ ինքը կցանկանա ու կառաջարկի:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## Մովսիսյանն ու Հակոբյանը առաջատարների թվում են



Շախմատի «Tradewise Gibraltar Chess Festivale» միջազգային մրցաշարում 8-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակը գլխավորում են 6,5-ական միավոր վաստակած անգլիացի Մայքլ Ադամսը եւ կանանց աշխարհի չեմպիոնուհի, չինացի Հոու Յիֆանը:

Նրանցից կես միավոր պակաս վաստակել են միանգամից 14 գրոսմայստերներ, որոնց թվում են Հայաստանի ազգային հավաքականի անդամ Սերգեյ Մովսիսյանը եւ ԱՄՆ-ի դրոշի ներքո հանդես եկող Վարուժան Հակոբյանը (լուսանկարում): Մեր հանրապետության երկրորդ ներկայացուցիչը՝ օլիմպիական եւ աշխարհի թիմային չեմպիոն Գաբրիել Սարգսյանը, առայժմ 5,0 միավորով 44-րդն է: Երեկ՝ իններորդ տուրում Վարուժան Հակոբյանը սեւերով հանդիպելու էր ադրբեջանցի Շախրիյար Մամեդյարովին, Սերգեյ Մովսիսյանի մրցակիցը Դավիթ Հովելն էր, իսկ Գաբրիել Սարգսյանինը՝ միջազգային վարպետ Գրեգ Հանլին:

## Շախմատի «Մեծ սաղավարտը» կանցկացվի այս տարվա աշնանը



Շախմատի «Մեծ սաղավարտի» (GSCA) ասոցիացիաների ներկայացուցիչները, որոնք հանդիպել էին Հոլանդիայի Վեյկ-ան-Զեե քաղաքում, հայտարարել են, որ «Մեծ սաղավարտի» եզրափակիչ մրցաշարը կանցկացվի այս տարվա սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 13-ը՝ երկու շրջանով եւ, ամենայն հավանականությամբ, երկու երկրում: Խաղատախտակների առջեւ կպայքարեն վեց ուժեղագույն գրոսմայստերներ՝ աշխարհի առաջնության Վիշվանաթան Անանդ-Բորիս Գելֆանդ մրցամարտի հաղթողը, Միխայիլ Տալի հուշամրցաշարի հաղթող Մագնուս Կարլսենը, «London Chess Classics»-ի հաղթող Վլադիմիր Կրամնիկը, «Tata Steel Chess» գերմրցաշարի հաղթող Լեւոն Արոնյանը, ինչպես նաեւ ատրիլի երկրորդ կեսին կայանալիք Լինարեսի եւ դրանից հետո՝ Բազնա (Ռումինիայում) մրցաշարերում առաջին տեղերը գրավող շախմատիստները: GSCA-ի ներկայացուցիչների հանդիպումում հաստատվել է նաեւ, որ Վեյկ-ան-Զեեի հոբելյանական՝ 75-րդ, մրցաշարը կկայանա 2013 թվականի հոկտեմբերի 11-ից 27-ը:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Դպրոցական «կատակի» հետեւանքները

Aravot.am-ը տեղեկացրել է, որ հունվարի 31-ին «ձախ աչքի ակնագնդի ցնցում» ախտորոշմամբ՝ Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն է տեղափոխվել Ղեւոնդ Ալիշանի անվան թիվ 95 դպրոցի 12 Ա դասարանի աշակերտ Երվանդ Էքմեքջյանը: Պարզվել էր, որ նույն օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, նշված դպրոցում վիճաբանություն է տեղի ունեցել Երվանդի եւ զուգահեռ դասարանի աշակերտներ Միսակ Եփրեմյանի, Արման Նազարյանի ու նրանց համադասարանցիների միջեւ: Փաստի առթիվ ոստիկանության Էրեբունու բաժնի հետաքննչական բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում: Փորձեցինք կապվել վիճաբանած աշակերտների դպրոցի տնօրենի հետ, սակայն դպրոցից փոխանցեցին, որ Սվետլանա Ակոճյանը գնացել է քաղաքապետարան: Հետեւաբար զրուցեցինք փոխտնօրեն Աննա Վարդանյանի հետ:

Տիկին Վարդանյանը հայտնեց, որ դպրոցում որեւէ վիճաբանություն չի եղել. «Դա ընդամենը կատակ է եղել, աղջիկ ջան»: Մեր հարցին՝ այդ դեպքում ինչու է կատակի արդյունքում տուժածը հայտնվել ակնաբուժական կենտրոնում, Ա. Վարդանյանը պատասխանեց. «Կատակ անելու ժամանակ ընկերոջ ձեռքը կպել է ընկերոջ այտոսկրին, ծնողն էլ անհանգստացել է ու համենայնդեպս տարել է ստուգման, ամեն ինչ նորմալ է, ոչ մի խնդիր ու արտառոց բան չկա»:

Ի դեպ, քաղաքապետարանի մեր աղբյուրներից պարզեցինք, որ մեր զրույցի պահին կրթության վարչության ներկայացուցիչները, դպրոցի տնօրենները եւ ոստիկանության աշխատակիցները քննում են «աշակերտական» կատակների հետեւանքները:





Միջանցքը, որտեղ տեղի է ունեցել «կատակը»:

Հավելենք, որ ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջում հրապարակվել է հաղորդագրություն այդ «կատակի» մասին: Ըստ հաղորդագրության. «Հունվարի 31-ին, ժամը 17.10-ին, Երեւանի Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնից ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում է ստացվել, որ «ձախ աչքի ակնագնդի ցնցում» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է դիմել Երեւանի թիվ 95 դպրոցի աշակերտ, 1995թ. ծնված Երվանդ Է.-ն:

Ոստիկանության ծառայողներին նա հաղորդում է տվել, որ նույն օրը, ժամը 11.30-ին, դպրոցում, վիճաբանության ժամանակ, զուգահեռ դասարանի աշակերտներ Միսակ Ե.-ն, Արման Լ.-ն եւ նրանց համադասարանցիները հրել են իրեն, ինչի հետեւանքով ինքը դեմքով հարվածել է պատին»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ

## ՀԱԿ-ից դուրս գալու որոշում չի ընդունվել



Երեկ aravot.am-ը Հայ ազգային կոնգրեսի քաղխորհրդում «Հայ կամավորականների համախմբում» հասարակական-քաղաքական նախաձեռնության ներկայացուցիչ Սամվել Հարությունյանից խնդրեց պարզաբանել՝ ի վերջո «Հայ կամավորականների համախմբումը» ՀԱԿ-ի անդա՞մ է, թե՞ ոչ:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, առաջիկա խորհրդարանական ընտրություններին ՀԱԿ-ի դաշինքում է նաեւ սույն նախաձեռնությունը, մինչդեռ նախաձեռնության համակարգող Ժիրայր Սեֆիլյանը ինչ-ինչ հակասությունների պատճառով վաղուց արդեն ՀԱԿ-ի հետ համատեղ գործունեություն չի ծավալում: Սամվել Հարությունյանն ասաց. «Ես մասնակցել եմ ՀԱԿ քաղխորհրդի բոլոր նիստերին, այդ թվում նաեւ այն նիստին, որտեղ որոշում ընդունվեց ընտրություններին դաշինքով մասնակցության մասին: Մեր եւ կոնկրետ իմ դիրքորոշումն ավելի մանրամասն կներկայացնեմ առաջիկայում կայանալիք մամուլի ասուլիսում»: Հստակեցմանը, այսինքն՝ «Հայ կամավորականների համախմբումը» շարունակո՞ւմ է մնալ ՀԱԿ-ի անդամ, մեր զրուցակիցն այսպես արձագանքեց. «Հայ կամավորականների համախմբումը» ՀԱԿ-ին անդամակցել է 2008 թվականի սեպտեմբերի 15-ից՝ պաշտոնական հայտարարությամբ: Այդ հայտարարությանը համահունչ կեցվածք է որդեգրել մինչ այսօր ու շարունակելու է այդպես: «Հայ կամավորականների համախմբումը» մինչեւ այսօր ՀԱԿ-ից դուրս գալու որոշում չի ընդունել»:

Ի պատասխան այն դիտարկման, որ Սամվել Հարությունյանը չէր կարող տեղյակ չլինել իր ընկերների եւ ՀԱԿ-ի հրապարակային տարաձայնություններից, հետեւաբար՝ ինչպե՞ս է վարվել, ինքնուրո՞ւյն է որոշումներ կայացրել, թե՞ Սեֆիլյանի եւ մյուսների հետ խորհրդակցությունների արդյունքում՝ Սամվել Հարությունյանն ասաց. «ՀԱԿ քաղխորհրդի նիստերն անցնում են բավականին բուռն: Տարաձայնություններ, տարակարծություններ միշտ էլ լինում են, բայց արդյունքում կոնսենսուս է լինում»:

Հարցին էլ՝ Հարությունյանը կիսո՞ւմ է իր ընկերների կարծիքը ՀԱԿ-ի գործունեության վերաբերյալ, թե՞ ոչ, այսպիսի պատասխան հնչեց. «Կոնգրեսի քաղխորհրդում «Հայ կամավորականների համախմբման» ներկայացուցիչը ես եմ, եւ իմ թեկնածությունն առաջադրել է Սեֆիլյանը»:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ երբ հակասություններ առաջացան ՀԱԿ-ի եւ Սեֆիլյանի միջեւ, վերջինս չի՞ փորձել ուղղորդել Հարությունյանի աշխատանքները ՀԱԿ քաղխորհրդում: Մեր զրուցակիցը կարճ կապեց. «Մնացյալ բոլոր հարցերի պատասխանները կհնչեցնեմ մամուլի ասուլիսում»: Սամվել Հարությունյանը ՀԱԿ քաղխորհրդի երեկվա նիստին եւս մասնակցել է, սակայն չցանկացավ բարձրաձայնել, թե ընտրացուցակի ձեւավորման որ սկզբունքին է ինքը կողմ:

Ն. Գ.

# Ամենահարուստը Ծառուկյանը չէ՞

## Ըստ Աշոտ Մանուչարյանի՝ «Ինչը մեծ է եւ շաղ, միշտ չէ, որ դոմինանտ է»

Պատասխանելով «Առավոտի» հարցին, թե ներկայիս քաղաքական զարգացումների համատեքստում ի՞նչ տպավորություն են թողնում կուսակցությունների՝ արդեն սկսված նախընտրական դեգերումները, «Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամ Աշոտ Մանուչարյանը պատմական էքսկուրս անելով՝ հիշեց երկու հազար տարի առաջ Քրիստոսի եւ հարուստի միջեւ տեղի ունեցած խոսակցությունը. «Քրիստոսը միակ ճանապարհն առաջարկեց՝ բաժանել ամեն ինչը եւ միանալ իրեն, որովհետեւ «խոստումն Աստծո արքայությունն» է»: Մեր օրերի համար Աշոտ Մանուչարյանը հետեւյալ եզրահանգումն է անում. «Այն ժամանակ մերժվեց նորմալ, մարդկային աշխարհը, եւ մենք արդեն երկու հազար տարի տառապանքների մեջ ենք: Հիմա նորից պնդում են, որ հարուստ մարդը կարեւոր բան է, եւ բոլորը պիտի ձգտեն հարստության»: Բնականաբար, ընդդիմանալով այդ պնդումներին՝ մեր զրուցակիցը հայտարարեց. «Ամեն հարուստ պետք է իմանա՝ եթե ինքը հարուստ է, եւ այն մեկ երեխան, որը մնացել է առանց բուժման, առանց ուսման, ընտանիքում մի պատ սպանել է թոռանը կամ թոռը՝ պապին՝ հանուն հազար դրամի, այդ ամբողջի կազմակերպողը այդ հարուստն է, հարստությանն ուղղված մարդը, անկախ նրանից՝ ինքը հարուստ դարձե՞լ է, թե՞ ոչ: «Հարուստի փիլիսոփայությունը» հիմա պաշտպանում են բոլոր քաղաքական ուժերը, եւ դրանով նրանք Հայաստանը պահպանում են այս ստորացուցիչ դեգերումների հատվածում»: «Առավոտի» դիտարկմանը՝ Հայաստանի ամենահարուստ մարդը ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանն է, եւ բոլոր քաղաքական ուժերն էլ ճանապարհներ են փնտրում նրա հետ համագործակցելու. ստացվում է, որ Ծառուկյա՞նն է ամեն ինչի մեղավորը, Աշոտ Մանուչարյանը հակադարձեց. «Ես չգիտեմ՝ որտեղից եւ ով է հայտնաբերել, որ ամենահարուստ մարդը Ծառուկյանն է, որովհետեւ ես տարբեր հարուստ մարդկանց մասին եմ լսել, բայց խնդիրը դա չէ: Կարեւորագույնը հետեւյալն է՝ ոչ միայն Ծառուկյանն է այդ համակարգի պահպանողը եւ ոչ էլ բազմաթիվ այլ երեւացող ու չերեւացող «փակ» օլիգարխները, որոնք բարձր պետական պաշտոնների են եղել եւ Հայաստանի ամենամեծ հափշտակումներն են անցկացրել: Չգիտես ինչու, օլիգարխներից որ խոսում ենք, հիշում ենք միայն բիզնեսմեն-օլիգարխներին, բայց ամենախոշոր եւ ամենահանցագործ օլիգարխները կարողություն կուտակած պետական պաշտոնյաներն են: Բայց հարցն այն է, որ ցանկացած մարդ, որն ուզում է դառնալ օլիգարխ, ուզում է դառնալ պետական պաշտոնյա, որպեսզի հարստություն կուտակի, նա նույնքան ուժեղ պահապանն է այս համակարգի: Իսկ այսօր քաղաքական դաշտի կողմից ողջ փիլիսոփայությունը կառուցվում է դրա վրա՝ դառնալ հարուստ: Դրանք են ծրագրային դրույթները»: Իսկ թե ովքեր են մնացյալ հարուստները, որոնց մասին լսել է մեր զրուցակիցը՝ «Ինչքան Հայաստանում մարդ կա, ովքեր եղել են կամ երազում են լինել օլիգարխ, նախարար եւ այլն, նրանք այդ շարքում են»,- ասաց Աշոտ Մանուչարյանը: Ճշտող հարցին էլ՝ նաեւ Հայաստանի հիմնական ընդդիմադիր ուժի՝ Հայ ազգային կոնգրեսի ծրագրային դրույթնե՞րն են այդպիսիք, Մանուչարյանը հակադարձեց. «Քաղաքական դաշտում չկա մի որեւէ ուժ, որը հարցականի տակ դնի հարուստի ստատուսը: Հարստանալու, ունեւորության, այսպես կոչված, բարգավաճ կյանքի ձգտումը ոչնչացնում է Հայաստանը: Այ, ժողովուրդը, որ այսօր այդքան փախչում է, պատճառն այն է, որ համընդհանուր մրցակցություն է՝ ով ավելի շատ կփախցնի: Այն քաղաքական ուժերը, որ խոսում են սահմանադրական կարգից, ընդամենը խոսում են մի բանից, որ մի քիչ կարգավորեն այդ համընդհանուր հափշտակման դաշտը»: Մանուչարյանը համոզված է, որ «սահմանադրական կարգը» ինքնըստինքյան հարց չի լուծում, որովհետեւ արեւմտյան քաղաքակրթության կողմից 300-400 տարի առաջ ստեղծված այդ համակարգն ընդամենը որոշակի սահմանների մեջ է դնում հափշտակումը: Ուստի նա կարեւորում է, որ «սահմանադրական կարգից» խոսողները հստակեցնեն՝ ինչ «սահմանադրական կարգից» են խոսում. «Միայն այն սահմանադրական կարգը կարող է Հայաստանը փոխել, որն ուղղված չէ գիշատիչ մարդու համակարգը պահպանելուն»:




Ելնելով ներկայիս քաղաքական իրականությունից, հետաքրքրվեցինք՝ այնուհանդերձ, հնարավոր համարո՞ւմ է մեր զրուցակիցը ԲՀԿ-ՀԱԿ համագործակցությունը եւ ինչպե՞ս է գնահատում ԲՀԿ-ի կեցվածքը, որը մեկ ռեւերանսներ է անում ընդդիմությանը՝ միանալով 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի առաջարկին, միաժամանակ Վարդան Բոստանջյանն արդեն շտապեց հայտարարել, որ իրենք պաշտպանելու են Սերժ Սարգսյանին: Մանուչարյանն ասաց. «Այդ ամենը Հայաստանի համար չի պարունակում որեւէ հեռանկար: Հայաստանի համար հեռանկարներ պարունակում են, օրինակ, էկոլոգիական շարժման նոր ձեւավորվող փիլիսոփայության մեջ, քաղաքական դաշտից դուրս՝ այլ դիմադրական խմբերի ու խմբակների մեջ: Ցավալի է, մեր քաղաքական դաշտում այսօր ոչնչացվում է վերջին սաղմերն այն հնարավորությունների, որոնք կան Հայաստանի համար: Ես նկատի ունեմ այն խմբերն ու մարդկանց, ովքեր կրում էին ոչ նյութապաշտ Հայաստանի պարագաներն իրենց մեջ: Նրանք կամաց-կամաց մարգինալանում են այս համակարգում»: Դիտարկմանը՝ այսօր դոմինանտը հենց քաղաքական ուժերն են, պարոն Մանուչարյանը հակադարձեց. «Ինչը մեծ է եւ շաղ, միշտ չէ, որ դոմինանտ է»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «ԲՀԿ-ի հետ ճնշումների լեզվով հնարավոր չէ խոսել»

ԲՀԿ կուսակցության անդամ եւ խորհրդարանական խմբակցության պատգամավոր Վարդան Բոստանջյանը երեկ իր ասուլիսում պատասխանելով հարցին, թե արդյոք ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանը չի՞ փոխի իր որոշումն ու համաձա՞յն է կոալիցիայի ստորագրած համատեղ հուշագրին, 2013-ի նախագահական ընտրություններում կսատարի՞ Սերժ Սարգսյանի թեկնածությունը, հայտարարել է. «Պարզապես առիթ չունենք չսատարելու: Եթե դուք նկատում եք, ես միշտ ձեռնպահ եմ մնում իմ ղեկավարի անունից խոսել, բայց բոլոր դեպքերում ես հասկանում եմ, որ մենք ունենք փաստաթուղթ, իսկ մենք միշտ հարազատ ենք մեր կողմից ստորագրված փաստաթղթերին»:

ԲՀԿ-ական պատգամավորի այս հայտարարության առնչությամբ մեկնաբանություն ստանալու խնդրանքով aravot.am-ը դիմեց Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանին: «Վարդան Բոստանջյանը ներկայացրել է իր անձնական կարծիքը: Կուսակցության դիրքորոշումն արտահայտում է կուսակցության նախագահը, իսկ այդ հարցի վերաբերյալ պարոն Ծառուկյանը բազմիցս է արտահայտվել, եւ ոչինչ չի փոխվել դրանից հետո»,- հայտարարեց Խաչիկ Գալստյանը՝ նկատի ունենալով Գագիկ Ծառուկյանի «այդ մասին՝ հաջորդ դասին» ձեւակերպումը:

Վարդան Բոստանջյանը իր ասուլիսում նաեւ հայտարարել էր, թե ԲՀԿ-ի վրա ճնշումներ չկան, եւ սա այն դեպքում, երբ դրա մասին բազմաթիվ պատեհ առիթներով ավելի վաղ հայտարարել էին ինչպես ինքը՝ Բոստանջյանը, այնպես էլ ԲՀԿ առաջնորդի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանն ու պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը: Ինչպե՞ս բացատրել արվող հայտարարություններում առկա հակասությունները: Ի պատասխան մեր այս հարցի՝ Խաչիկ Գալստյանն ասաց, թե իրենք որպես ճնշում դիտարկվող բոլոր նմանատիպ տեղեկություններն ու ահազանգերը ուշադրությամբ ուսումնասիրում եւ վերլուծում են: «Դրանք բոլորը պարոն Ծառուկյանն ընդունում է ի գիտություն, ու միայն այդքանը: Այդ տվյալները ամբողջությամբ համադրելուց հետո մենք հանդես կգանք վերջնական եզրակացությամբ»,- հավաստիացրեց Խաչիկ Գալստյանը՝ հավելելով, թե «ԲՀԿ-ի հետ ճնշումների լեզվով հնարավոր չէ խոսել»:



ԲՀԿ-ական պատգամավորի երեկ արած հայտարարություններից մեկն էլ այն էր, թե ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ ոչ միայն վստահության պակաս չկա, այլեւ ավելին՝ ԲՀԿ-ն եւ ՀՀԿ-ն անգամ փոխհամաձայնեցված կարգով կառաջադրեն իրենց մեծամասնական թեկնածուներին: Խաչիկ Գալստյանն այս առնչությամբ էլ ասաց, թե այդ խնդրի շուրջ եւս խոսելու առիթ եղել է եւ ասվել է, որ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը հանձնարարականներ է տվել կուսակցության տարածքային կառույցների պատասխանատուներին՝ բոլոր 41 մեծամասնական ընտրատարածքներում առաջարկել 2-3 թեկնածու, որոնց պոտենցիալն ուսումնասիրելուց հետո կորոշվի նրանց՝ կոնկրետ մեծամասնական ընտրատարածքում առաջադրելու հարցը: Այնպես որ՝ այս հարցում եւս ոչինչ չի փոխվել:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 02.02.2012

# Նոր փուլային տարբերակ Հայաստանի համար

Հայաստանի արտաքին քաղաքականության նախորդ երեք տարիների ուսումնասիրությունը հույս է ներշնչում դրական դինամիկայի ձեւավորված շղթայի նկատմամբ: Ըստ արձանագրված հաջողությունների տրամաբանական հաջորդականության՝ հայ-ռուսական դաշնակցության գագաթնակետը դարձած 2010թ.-ին (միաժամանակ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում այն եւս էական էր) եւ հայ-ֆրանսիական բարեկամության մեջ բեկումնային համարվող 2011թ.-ին հաջորդած տարում կանխատեսելի է (միաժամանակ տարին կարեւորվեց հայ-չինական բարձր մակարդակի շփումներով), որ թե այս եւ թե այլ երկրների հետ հարաբերություններում կարելի է սպասել նոր զարգացումների:

Ամեն ինչ սկսվեց 2009 թվականին, երբ տարին նշանավորվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացով, եւ վերջինիս շուրջ ու դրա համատեքստում էր ուժային կենտրոնների հետ հարաբերությունների ակտիվացումը: Հայ-թուրքական գործընթացը «նախաձեռնողական» որակված արտաքին քաղաքականության այն դրսեւորումներից էր, որը վերադարձրեց Հայաստանը միջազգային մեծ օրակարգ: Թեեւ ակնհայտ դարձավ, որ թուրքական կողմին գործընթացում հետաքրքրում էր բուն պրոցեսը, քան արդյունքը, կարելի է համոզված ասել, որ պաշտոնական Երեւանը սա եւս կանխատեսել էր ու, որպես այլընտրանք, կազմել պրոցեսի օգտակարության սեփական նախահաշիվը՝ եթե Թուրքիան հետ կանգնի իր պարտավորությունից:

Գործընթացից կրած գրեթե բոլոր վնասների ու ձեռքբերումների եւ դրանց համարժեքության մասին ներկայացվել են տարաբնույթ վերլուծություններ, սակայն մի բան հաստատ է. Հայաստանը դրանով վերահաստատեց միջազգային հարաբերություններում, թեկուզ տարածաշրջանային մակարդակով, օրակարգ ձեւավորողի իր դերը: Միաժամանակ Հայաստանը ի ցույց դրեց Թուրքիայի ապակառուցողական քաղաքականությունը եւ այն արժանացրեց միջազգային հանրության քննադատությանը:

Սակայն սա ամենը չէ, եւ կարծես թե ստվերվեց մի կարեւոր պատճառահետեւանքային կապ եւս. Հայաստանին սատարած եւ Թուրքիայի վրա ազդելու որոշակի երաշխիքներ տված միջնորդները մի կողմից՝ Թուրքիային սանձահարելու, մյուս կողմից էլ՝ Հայաստանին փոխհատուցելու նկատառումներով ոչ միայն խորացրին համագործակցությունը Հայաստանի հետ, քայլեր ձեռնարկեցին Ցեղասպանության ճանաչման գործընթացի ուղղությամբ, այլեւ ամենակարեւորը՝ կոմպենսացրին Լեռնային Ղարաբաղի հարցում իրենց հայամետությամբ, ինչը դրսեւորվեց հաջորդականորեն:

Այսպես, 2010 թվականը Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցության գագաթնակետն էր, եւ տեղի ունեցած իրադարձությունները ոչ միայն զսպաշապիկ եւ սառը ցնցուղ էին իր դիրքորոշումը կոշտացրած Ադրբեջանի, այլեւ Թուրքիայի համար: Տարին ոչ միայն սկսվեց ՀԱՊԿ-ում Հայաստանի ակտիվ նախագահությամբ, որը դրսեւորվեց արագ արձագանքման ուժերի ստեղծման վերաբերյալ շատ կարեւոր մեխանիզմի ստեղծմամբ, այլեւ կայացավ Ռուսաստանի նախագահի առաջին պետական այցը Հայաստան: Այցի ընթացքում ստորագրվեց ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը, որով բազան կմասնակցի Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանը եւ այդ նպատակով Հայաստանի ռազմական ուժերին ժամանակակից սպառազինությունների եւ ռազմական տեխնիկայի մատակարարմանը: Սրանով վերջնականապես չեզոքացվեց Ադրբեջանի՝ ուժային մեթոդով խնդրի հանգուցալուծման հույսերի վերջին մնացորդները: Ավելին, ստորագրվեց Հայաստանի տարածքում ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկներ կառուցելու նպատակով համագործակցության մասին համաձայնագիրը՝ այն դեպքում, երբ Թուրքիան եւ Ադրբեջանը տարբեր առիթներով մատնացույց էին անում ատոմակայանի մաշվածության եւ փակման անհրաժեշտության մասին: Ենթատեքստում առավել քան սիմվոլիկ էր նախագահների մասնակցությունը ռուս-թուրքական պատերազմում զոհված ռուս զինվորների հիշատակը եւ հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող «Պատվո բլուր» հուշահամալիրի բացմանը:



Վերոհիշյալ զարգացումներն էին պատճառը, որ չնայած իր ռազմատենչ հայտարարություններին եւ Մինսկի խմբից եւ Ռուսաստանից հրապարակային դժգոհություններին՝ Բաքուն ոչ միայն անառակ որդու վերադարձը հիշեցնող խոնարհությամբ մասնակցեց ՌԴ նախագահի միջնորդությամբ Սոչիում, Սանկտ Պետերբուրգում եւ Աստրախանում տեղի ունեցած հանդիպումներին, այլեւ Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովում ստորագրեց խաղաղություն պարտադրող, ինքնորոշման իրավունքն ընդգծող հնգակողմ հայտարարություն:

Հաջորդած 2011 թվականը Հայաստանի արտաքին քաղաքական կյանքում Ֆրանսիայի ֆավորիտության տարին էր:

Դեռեւս տարեսկզբին Ֆրանսիայի խորհրդարանում պատասխանելով ԼՂ վերաբերյալ հարցին՝ արտգործնախարար Ալեն Ժյուպեն ընդգծեց՝ «անշուշտ, մեզ համար ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ցանկացած հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքն է»: Սա հերթական անգամ հիստերիայի ալիք բարձրացրեց Ադրբեջանում, որն «իրեն չհետեւող, բայց բունը կեղտոտ լինելուց դժգոհ ագռավի» պատմության նմանությամբ հիմա էլ սկսեց Ֆրանսիային մեղադրել Մինսկի խմբում կողմնակալություն եւ հայամետություն ցուցաբերելու մեջ:

Իրենց ջերմությամբ հայտնի հայ-ֆրանսիական հարաբերությունները աննախադեպ դրսեւորում ստացան աշնանը, երբ տեղի ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Փարիզ, որին հաջորդեց Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան, որն իր նշանակությամբ համարվեց պատմական եւ առանցքային:

Անկեղծությունը, որով համակված էր Ֆրանսիայի նախագահի ողջ ելույթը, արտասովոր, եզակի երեւույթ է դիվանագիտական պրակտիկայում: Մինչ Ադրբեջանը անփառունակ փորձեր է անում արտագրել եւ յուրացնել քաղաքակրթության ելեւէջներում հանգչած այլ ժողովուրդների ժառանգությունը, Սարկոզին իր ելույթում ոչ միայն ընդգծում է հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների դարավոր պատմությունը՝ նշելով դրվագներ եւ խոսելով հայոց թագավորների մասին, այլեւ նշում երկու ազգերի՝ եվրոպական արժեհամակարգի հիմքը կազմող համաժառանգության մասին՝ վերահաստատելով եվրոպական ընտանիքի կողմից հայերի եւ Հայաստանի ընկալումը որպես յուրայինի: Այն, որ Ֆրանսիան ընտրել է ոչ թե խանդի ու կախվածության, այլ փոխադարձ համակրանքի ու արժեքների հիման վրա տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու քաղաքականություն, հաստատեց Սարկոզին՝ նշելով, որ Հայաստանի սերտ համագործակցությունը Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ իրենց մոտ միայն հիացմունք է առաջացնում: Ինչ վերաբերում է մնացած հայտարարություններին, ապա դրանք կարելի է բնորոշել որպես շոկաթերապիա՝ ինչպես Թուրքիայի, այնպես էլ իր փոքրիկ եղբոր համար: Սարկոզին ոչ միայն խոսեց ցեղասպանության, դրա դառնությունների մասին՝ իրերը կոչելով իրենց անուններով, այլեւ կոչ արեց Թուրքիային առերեսվել սեփական պատմության հետ եւ ճանաչել ցեղասպանությունը: Ընդգծելով, որ Ֆրանսիան հասկանում է, թե ինչ նշանակություն ունի Ղարաբաղը Հայաստանի համար, Սարկոզին կողմերին հիշեցրեց կամքի անհրաժեշտության մասին, չմոռանալով շեշտել, որ Հայաստանի իշխանությունների մեջ նա այդ կամքն ու ուժը տեսնում է: Ավելին, Սարկոզին պնդեց, որ Հայաստանը իրավունք չունի ապրելու պատերազմի, թեկուզեւ քողարկված, վիճակում, շրջափակման մեջ, ինչով մեղադրեց Ադրբեջանին ստեղծված իրավիճակի մեջ: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Սարկոզին, Մերկելի հետ միասին, ներկայացնում է Եվրոպայում գերիշխող դիրքորոշումներն ու ամենաէական ազդեցությունն ունենում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում, ապա նրա կարծիքը եւ հնչեցրած մոտեցումները ավելին են, քան սոսկ Ֆրանսիայի նախագահինը:

Շոկաթերապիան պետք է գտներ իր տրամաբանական շարունակությունը, եւ դա դրսեւորվեց Ֆրանսիայի Ազգային ժողովի եւ Սենատի կողմից Ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունմամբ: Սա ոչ միայն Թուրքիայի մոտ արթնացրեց զայրույթ, այլեւ անթաքույց խորը ափսոսանք ժամանակին հայ-թուրքական արձանագրություններին ընթացք չտալու համար: Ինչպես նշում էր գրող Հենրի Թորոն. «Դու չես կարող շոկի ենթարկվել, մինչեւ չունենաս անմիջական կապ այն բանի հետ, ինչը քեզ շոկի է ենթարկում»: Թուրքիայի ջայլամային քաղաքականությունը, որի գործիքներից մեկն էր դարձել տխրահռչակ 301 հոդվածը եւ հայ-թուրքական գործընթացի շահարկումը, բերեց նրան, ինչի համար այսօր Թուրքիան զղջում է ու վճարում: Ֆրանսիական արդարության կրկնությունը այլ երկրներում պետք է սեղմի օղակն այնքան, մինչեւ Թուրքիան գիտակցի, որ ձիուն պոչից չեն գամում, եւ 301 հոդվածի վերացմամբ երկրում արդեն իսկ սկսված հասարակական ճանաչման ծավալումն է, որ կարող է ապահովել սեփական պատմության արյունալի էջի սահուն թերթումը: Այլապես ֆրանսիական օրինագծի նման տասնյակ օրինագծերի ընդունումը կլինի ուղիղ համեմատական Թուրքիայի պետական ժխտողականության աճին եւ 301 հոդվածի կիրառությանը:

Այսպիսով, դատելով վերջին երեք տարիներին գրանցված հաջորդական զարգացումների դինամիկայից, 2012-ին նշված շղթան կարող է տարածվել եւ ընդգրկել նոր երկրներ: 2012-ը հոբելյանական է բազմաթիվ պետությունների կողմից Հայաստանի անկախության ճանաչման 20-ամյակի տեսանկյունից եւ կարող է դառնալ ոչ միայն սիմվոլիկ, այլեւ իրապես հոբելյանական ձեռնարկումների տարի: Պետք է օգտագործել պատեհ առիթը եւ հանույքով դիտել, թե այլեւս ումից են «արդարություն» եւ «անկողմնակալություն» պահանջելու մեր թուրքալեզու հարեւանները:

ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար

## Մարդասիրություն ցուցաբերելուց առաջ

### Բաց նամակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին

Ըստ լրատվական միջոցներով շրջանառվող լուրերի՝ կառավարությունը ուղիներ է փնտրում առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու համար ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժաչափերը փոփոխելու համար, եւ այդ նպատակով նախատեսվում է կրկին վերանայել գործերը, պարզելու՝ որքանով են նշանակված պատիժները համապատասխանում հանցագործության ծանրությանը եւ ամբաստանյալի անձին: Հայտնի է նաեւ, որ կառավարությունը ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու օրենքի նախագիծ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողով, որով առաջարկվում է ցմահ ազատազրկման չդատապարտել այն անձանց, որոնց 21 տարին չի բոլորել: Եվ այդ ամենը արվում է այն հիմնավորմամբ, որ ցմահ ազատազրկման դատապարտվածների թիվը մեր հանրապետությունում շատ է, նրանց պահելու վայրեր եւ բավարար պայմաններ չկան, երբ այլ երկրներում, որոնց ազգաբնակչության քանակը մերից մի քանի անգամ ավելին է, եւ կան դատապարտյալներին պահելու բավարար պայմաններ ու վայրեր, ցմահ ազատազրկման դատապարտվածների թիվն ավելի քիչ է:

Կարծում եմ, որ ցմահ ազատազրկման դատապարտվածների քանակի ավելացումը պայմանավորված է առանձնապես ծանր հանցագործությունների համար նախատեսված պատժաչափի՝ գնդակահարության վերացմամբ: Եթե նախկինում այդ պատժատեսակը ուներ նաեւ կանխարգելող ուժ, ապա այսօրվա դրությամբ այն չի գործում, քանի որ, օրինակ՝ սպանություն կատարած հանցագործը գիտի, որ ինչ-որ ժամանակ, թեկուզ 20 տարի անց, կարող է ազատվել պատժի հետագա կրումից, կամ պատժի կրելու ընթացքում հնարավոր է՝ ներում շնորհվի կամ հետագայում իրադրության փոփոխման արդյունքում դադարի կրել պատիժը: Գտնում եմ, որ մարդասիրություն է դրսեւորվում այն անձանց նկատմամբ, որոնք զուրկ են նման զգացումից, անձինք, որոնց հանցագործություն կատարելիս չի կասեցրել ոչ իրենց երիտասարդ տարիքը, իրենց ընտանիքը, շրջապատը, ի վերջո՝ հասարակությունը: Նրանք իրենց հանցավոր նպատակը(ները) իրականացնելիս չեն մտածել դիմացինի մասին, ում կյանքը խլել են, կյանք, որը Աստծո պարգեւն է մարդուն: Չեն մտածել ու մտածելու ցանկություն էլ չեն ունեցել այն մասին, որ անձին զրկելով կյանքից՝ դրանով մարում են նրա ծնողների, ամուսնու, երեխաների, մերձավորների երազանքները, հույսերը, նրանց պատճառում են անդառնալի կորուստ, մատնում հուսալքության:

Կարծում եմ, որ նման «մարդասիրական» մոտեցում ցուցաբերելիս պետք է հաշվի առնվի, ինչու ոչ, նաեւ հաշվի նստվի հանցագործության զոհ դարձած անձանց հարազատների կարծիքի հետ, որը միանշանակ է՝ ուրիշի կյանքը խլած անձինք պետք է պատժվեն օրենքի ողջ խստությամբ, ամբողջությամբ կրեն սահմանված պատիժը, նման անձինք ներում չունեն: Հանցագործների զոհերից մեկը ես եւ իմ ընտանիքն է: 2006թ. հոկտեմբերի 29-ին Ռոբերտ Սարգսյան, Հենրիկ Հովնինյան եւ Թաթուլ Միրզոյան հանցագործ ոհմակի կողմից առանձին դաժանությամբ սպանվեց միջնեկ որդիս՝ Արթուր Խալաթյանը (աշխատում էր «Ավիասերվիս» ՓԲԸ-ում որպես ծառայության պետ), որի հետեւանքով որբացան նրա երկու անչափահաս դուստրերը, այրիացավ երիտասարդ կինը, որոնց հետ մինչ օրս ես եւ կինս, նրա մեծահասակ ծնողները սգում ենք որդուս կորուստը, վիշտ, որը հնարավոր չէ ամոքել նույնիսկ հանցագործներին մահապատժի ենթարկելով: Չնայած դրան, այսօրվա դրությամբ ինչ-որ չափով մեզ սփոփում է այն միտքը, որ հանցագործները պատժվել են օրենսդրությամբ նախատեսված, կատարած հանցագործությանը համարժեք, ամենախիստ պատժատեսակով, գտնվում են անազատության մեջ եւ զրկված են կրկին չարիք գործելու, այլ անձանց կյանքից զրկելու, նրանց օջախը եւս քանդելու հնարավորությունից, եւ հույս ունենք, որ նման անձինք դեռեւս երկար ժամանակ զրկված կլինեն նման հնարավորությունից:

Դիմելով Ձեզ՝ հուսով եմ, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հարցը քննարկելիս, նրանց նկատմամբ «մարդասիրություն» ցուցաբերելուց առաջ կհիշվենք նաեւ մենք՝ նրանց զոհերը, ինչպես նաեւ հաշվի կառնվի այդ հարցում մեր ունեցած կարծիքը:

ԼԵՎՈՆ ԽԱԼԱԹՅԱՆ
(Արթուր Խալաթյանի հայր)
R